ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

27 դեկտեմբերի 2018թ. **N 179-Ա**
ք. Երևան

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՆԱԽԱՁԵՌՆՈՂ ԽՈՒՄԲ ԵՎ ՆԱԽԱՁԵՌՆՈՂ ԽՄԲԻ ԼԻԱԶՈՐ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԱՐԳԱՐՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ

Քննարկելով քաղաքացի Հովհաննես Մարգարյանի՝ նախաձեռնող խումբ և նախաձեռնող խմբի լիազոր ներկայացուցիչ գրանցելու վերաբերյալ 26.12.2018թ. դիմումը, Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը

Պ Ա Ր Զ Ե Ց.

Քաղաքացի Հովհաննես Մարգարյանը 2018 թվականի դեկտեմբերի 26-ին Կենտրոնական ընտրական հանձնաժողով է ներկայացրել դիմում՝ խնդրելով գրանցել քաղաքացիական նախաձեռնության կարգով Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունում փոփոխություններ կատարելու նպատակով գրանցել նախաձեռնող խմբին և նախաձեռնող խմբի լիազոր ներկայացուցչին, ինչպես նաև նախաձեռնող խմբի անդամներին տրամադրել սահմանված ձևի վկայականներ:

Դիմումին կից ներկայացված են՝ նախաձեռնող խումբ կազմավորելու և նախաձեռնող խմբի լիազոր ներկայացուցիչ նշանակելու մասին որոշումը, նախաձեռնող խումբ կազմավորելու և նախաձեռնող խմբի լիազոր ներկայացուցիչ նշանակելու և Սահմանադրությունում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին նիստի ընթացքում ընդունված որոշումների վերաբերյալ արձանագրություն, նախաձեռնող խումբ կազմավորելու և նախաձեռնող խմբի լիազոր ներկայացուցիչ նշանակելու մասին որոշումը ստորագրած քաղաքացիների անձը հաստատող փաստաթղթերի պատճենները և Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագիծը՝ էլեկտրոնային և թղթային տարբերակով: Դիմումում նշված է նաև նախաձեռնող խմբի էլեկտրոնային հասցեն:

Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի հիմնավորումները (պատճառաբանությունները) և եզրահանգումը

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 202-րդ հոդվածն ամրագրում է. «1. Սահմանադրությունը և Սահմանադրության 1-3-րդ, 7-րդ, 10-րդ և 15-րդ գլուխներում, ինչպես նաև Սահմանադրության 88-րդ հոդվածում, 89-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին նախադասությունում, 90-րդ հոդվածի 1-ին մասում, 103-րդ հոդվածի 2-րդ

մասում, 108-րդ, 115-րդ, 119-120-րդ, 123-125-րդ, 146-րդ, 149-րդ և 155-րդ հոդվածներում, 200-րդ հոդվածի 4-րդ մասում փոփոխություններն ընդունվում են միայն հանրաքվեի միջոցով: Սահմանադրություն ընդունելու կամ փոփոխելու նախաձեռնության իրավունք ունեն պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ երրորդը, Կառավարությունը կամ ընտրական իրավունք ունեցող երկու հարյուր հազար քաղաքացի: Ազգային ժողովը նախագիծը հանրաքվեի դնելու վերաբերյալ որոշումն ընդունում է պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երկու երրորդով:

2. Բացառությամբ սույն հոդվածի 1-ին մասում նշված հոդվածների, Սահմանադրության մյուս հոդվածներում փոփոխություններն ընդունում է Ազգային ժողովը՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երկու երրորդով: Համապատասխան նախաձեռնության իրավունք ունեն պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ քառորդը, Կառավարությունը կամ ընտրական իրավունք ունեցող հարյուր հիսուն հազար քաղաքացի:

3. Եթե սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված Սահմանադրության փոփոխությունների նախագիծն Ազգային ժողովը չի ընդունում, ապա պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով ընդունված որոշմամբ այն կարող է դրվել հանրաքվեի:»:

Դիմումի և կից փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում Կենտրոնական ընտրական հանձնաժողովն արձանագրում է, որ դիմումին կից Սահմանադրության փոփոխությունների քաղաքացիական նախաձեռնության կարգով ներկայացված նախագծի նկատմամբ կիրառել են Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 202-րդ հոդվածի 1-ին մասի կանոնակարգումները:

«Հանրաքվեի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝

«1. Սույն օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված՝ Սահմանադրության փոփոխությունների նախագիծը հանրաքվեի դնելու նախաձեռնության իրավունք ունեն՝

3) ընտրական իրավունք ունեցող առնվազն 200 000 քաղաքացի:»:

«Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 84-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

«Սահմանադրություն ընդունելու կամ Սահմանադրության 202-րդ հոդվածի 1-ին մասում նշված հոդվածները փոփոխելու նախաձեռնության իրավունք ունեն պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ երրորդը, Կառավարությունը կամ ընտրական իրավունք ունեցող երկու հարյուր հազար քաղաքացի:»:

Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝

«Սահմանադրության փոփոխությունների՝ Կառավարության նախաձեռնությունն իրականացվում է Կառավարության որոշմամբ, իսկ քաղաքացիական նախաձեռնությունը՝ քաղաքացիական նախաձեռնության կարգով Ազգային ժողով օրենքի

նախագիծ ներկայացնելու համար՝ «Հանրաքվեի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով սահմանված կարգին համապատասխան:»:

«Հանրաքվեի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

«Քաղաքացիական նախաձեռնության կարգով Ազգային ժողովին օրենքի նախագիծ առաջարկելու կամ հանրաքվեի միջոցով ընդունված օրենքում փոփոխություն կատարելու մասին օրենքի նախագիծը հանրաքվեի դնելու համար կազմավորվում է առնվազն 50 քաղաքացուց բաղկացած նախաձեռնող խումբ:»:

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝

«Նախաձեռնող խումբը գրանցման համար Կենտրոնական ընտրական հանձնաժողով է ներկայացնում նախաձեռնող խմբի բոլոր անդամների կողմից ստորագրված՝ նախաձեռնող խումբ կազմավորելու և նախաձեռնող խմբի լիազոր ներկայացուցիչ նշանակելու վերաբերյալ որոշումը, որում առկա ստորագրությունները վավերացվում են նոտարական կարգով, նախաձեռնող խմբի անդամների անձը հաստատող փաստաթղթի պատճենները, համապատասխան օրենքի նախագիծը՝ էլեկտրոնային և թղթային տարբերակով, և նախաձեռնող խմբի էլեկտրոնային փոստի հասցեն, որը նախաձեռնող խմբի գրանցումից հետո հրապարակվում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում: Նախաձեռնող խումբ կազմավորելու և նախաձեռնող խմբի լիազոր ներկայացուցիչ նշանակելու վերաբերյալ որոշման ձևը սահմանում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովը:»:

Դիմումի և դիմումին կից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրությամբ Կենտրոնական ընտրական հանձնաժողովն արձանագրում է, որ քննարկման առարկա դիմումին կից ներկայացված են «Հանրաքվեի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 13-րդ հոդվածի 4-րդ մասով պահանջվող անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը:

«Հանրաքվեի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ «Կենտրոնական ընտրական հանձնաժողովը երեք աշխատանքային օրվա ընթացքում գրանցում է նախաձեռնող խմբին և նախաձեռնող խմբի լիազոր ներկայացուցչին կամ մերժում է գրանցումը, եթե սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանված պահանջները պահպանված չեն: Կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշումն ուժի մեջ է մտնում նիստում հրապարակվելու պահից և մինչև հաջորդ օրվա ավարտը տեղադրվում Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում:»: Նույն հոդվածի 19-րդ մասի համաձայն՝ ստորագրությունների հավաքումն իրականացվում է նախաձեռնող խմբի գրանցումից հետո՝ 45 օրվա ընթացքում:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով «Հանրաքվեի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի, 13-րդ հոդվածի 1-ին, 5-րդ և 19-րդ մասերի պահանջներով, Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

1. Նախաձեռնող խումբ և նախաձեռնող խմբի լիազոր ներկայացուցիչ գրանցելու վերաբերյալ 26.12.2018թ. դիմումը բավարարել՝ գրանցել քաղաքացիական նախաձեռնության կարգով Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունում փոփոխությունների նախագիծ ներկայացրած նախաձեռնող խմբին և որպես նախաձեռնող խմբի լիազոր ներկայացուցիչ՝ Հովհաննես Մարգարյանին:

2. Սահմանադրության փոփոխությունների նախագիծը հանրաքվեի դնելու նախաձեռնության իրավունք ունեցող առնվազն 200.000 քաղաքացիների ստորագրությունների հավաքման համար ամրագրված 45-օրյա ժամկետ սահմանել 2018 թվականի դեկտեմբերի 28-ից մինչև 2019 թվականի փետրվարի 10-ը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում նիստում հրապարակվելու պահից:

4. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ օրացուցային երեք օրվա ընթացքում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ **Տ. Մուկուչյան**